3. Մենք մեր միջոցներով կօգնենք Հայաստանի պարենաւորման և երկրի մէջ տնտեսական բնականոն դրութեան վերահաստատման:

4. Երկու կողմերը յանձն կառնեն ազատ անցք տալ իրենց երկաթուղիներով և հաղորդակցութեան բոլոր ճանապարհներով միւս կողմին պատկանող անձերին և ապրանքներին և արգելք չեն յարուցանելու միւս կողմի և ծովի, ինչպէս նաև այլ ուրիշ երկրների միջև եղած թրանզիտի դէմ:

5. Թիւրքիան յանձն է առնում վերաբնակեցնել իրենց օջախներում համաշխարհային պատերազմի պատճառով իրենց հողամասերից դաղթած հայերին և տալ նրանց ամենաքաղաքակրթուած երկրներում ազգային փոքրամասնութեանց տուած ամենալայն իրաւունքները:

6. Թիւրքիան պահանջում է, որ Հայաստանը տայ իր ապահովութեան համար պէտք եղած երաշխիքները: Մեր պատուիրակները սպասում են ձեր բանակցողներին Ալեքսանդրապոլում. վերջիններս պէտք է ունենան իրենց հետ բանակցելու և հաշտութիւն ստորագրելու պէտք եղած լիազօրագրերը:

7. Հաշտութեան բանակցութեանց ընթացքում թշնամութիւնները դադարեցնելու զինադադարի պայմանները ձեզ կը հաղորդուեն մեր արևելեան ճակատի հրամանատարի կողմից:

Արտաքին գործոց ժողովրդակ. կոմիսար՝ Ահմէդ Մուխտար

Դուք տեսնում էք արդէն, թէ ինչպէս մեր հակառակորդի խօսքերն ու գործերը չեն համապատասխանում իրար. այն ժամանակ, երբ մենք ընդառաջ ենք գնում իրենց իսկ առաջարկած զինադադարի պայմաններին և անմիջապէս գործադրում, նրանք մէջ են բերում նոր պահանջներ, որոնց կատարումով Հայաստանը պիտի կիսուի, զինաթափուի և ինքնապաշտպանութեան միանգամայն անընդունակ դառնայ: Այդ բոլորի հետ նրանք չեն մոռանում ընդգծել, որ Հայաստանը Թիւրքիային ապահովութեան երաշխիքներ պիտի տայ, այդ նշանակում է, որ յետագայում ևս պիտի նոր պահանջներ դրուի, այս անգամ, դուցէ, Հայաստանի ամբողջական ոչնչացման խնդիրը հրապարակ բերուի և հէնց այդ նպատակով էլ Անդորայի կառավարութիւնը չարժի իր բանակները Հայաստանի վրա:

Այսպիսով հայ ժողովուրդը կանգնած է ծանր փորձութեան առջև. նա կամ պէտք է կուի, կամ անխնայ մորթուի տաճիկների ձեռքով: Կառավարութիւնը սպառելով բոլոր խաղաղ միջոցները՝ կրկին փարել է զէնքին, որովհետև երկրի ու ժողովրդի փրկութեան համար ուրիշ ելք չկայ (ծափահարութիւն):

Խօսում է պատգ. Ալ. Խատիսեանը. — Լսելով նախարարապետի զեկուցումը և կառավարութեան բռնած ընթացքը՝ կուզէի իմ խօսքի ընթացքում կանգ առնել մէկ կարևոր խնդրի վրա: Ամէն պատերազմ վերջանում է խաղաղութեան դաշինքով, բայց պէտք է դիտնալ, որ այդ խաղաղութիւնը միշտ միատեսակ չի լինում. խաղաղութիւն կայ, որ հանդէս է գալիս իբր պարտութեան հետևանք և տասնեակ տարիներ զգացնել է տալիս իր բացասական ազդեցութիւնը. կայ նաև խաղաղութիւն, որ գալիս է յաղթութեան յետևից ու բերում յաղթող ժողովրդին բարեկեցութիւն: Եթէ այդ այդպէս է, ապա իւրաքանչիւր պատերազմող ժողովուրդ պէտք է դիմէ դէպի պատուաբեր խաղաղութիւն, պէտք է ձեռք բերէ մի դաշինք, որի հովանու տակ կարողանայ անարգել ապրել ու զարգանալ. իսկ երբ խնդիրը վերաբերում է մասնաւորապէս հայ ժողովրդին, ապա նա պիտի ունենայ կրկնակի մտահոգութիւն՝ հասնել պատուաբեր խաղաղութեան նիւթական և բարոյական տեսակէտներով և կնքել այնպիսի հաշտութիւն, որ անսասան լինի մեր երկրի գոյութեան հիմքը: